ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 01 >> Հոկտեմբերի 2018թ. N 141

ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի երկրորդ մասի <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության <<Բաղրամյանի (Վաղարշապատ) միջնակարգ դպրոց>>, <<Մերձավանի միջնակարգ դպրոց>>, <<Ակնալճի Ա.Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Սարդարապատի միջնակարգ դպրոց>>, <<Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության վերահսկողություն իրականացնելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների իրականացնել քսանհինգ աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության համապատասխան պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին (համաձայնությամբ):
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Ա.Ղուկասյանին:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Недействительная подпись

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

VERIFIED OCSP 01.11.2018 20:07:01 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի 2018 թվականի նոյեմբերի -1-ի
N 141 կարգադրության

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԿԱԶՄ

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Ն. Սարգսյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակութի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ.

Անդամներ՝

Լ.Հարությունյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար.

Ս. Սաֆարյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Վ.ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ